«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի
ձևավորումը առարկայի դասավանդման
ընթացքում

Առարկան՝Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Վարդուհի Մուրադյան
Ղեկավար՝ Անուշ Աբելյան

Ուսումնական հաստատություն՝« Վարդանանք » կրթահամալիր

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

ԻՆՉ Է ԱՐԺԵՔԸ 4

ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ.....5

ԱՐԺԵՔ ԵՎ ՆՈՐՄ.....6

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ.....8

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻԻ, ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԵՐԻՆ.....9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....12

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....13

Ներածություն

<<Ձեր համոզմունքները կերտում են ձեր մտքերը, ձեր մտքերը դառնում են ձեր խոսքերը, ձեր խոսքերը դառնում են ձեր գործողությունները, ձեր գործողությունները դառնում են ձեր սովորությունները, ձեր սովորությունները կերտում են ձեր արժեքները, ձեր արժեքները կերտում են ձեր ճակատագիրը>> :

Մահաթմա Գանդի

Վերջին շրջանում, հատկապես պատերազմի օրերին և առավելապես հետպատերազմյան շրջանում հաճախ ենք անդրադառնում արժեհամակարգի թեմային՝ հաճախ ավելի մտահոգվելով դրա՝ օր օրի նվազման կամ երբեմն նաև իսպառ բացակայության մասին:

Ի՞նչ է փոխվել մեր արժեհամակարգում, մեր մտածողության , առավել ևս ազգային մտածողության մեջ: Իսկ փոխվե՞լ է արդյոք: Ի՞նչ է արժեհամակարգը, որի մասին բոլորս խոսում ենք, նկատում նրա բացակայությունը կամ փոփոխությունը, պատկերացնու՞մ ենք արդյոք, թե երբ և ինպես է ձևավորվում այն, կամ ինչպես պետք է վերագտնել այն…

Մեր երկրում շատ կարևոր դեր և նշանակություն է տրվում անհատի աժեհամակարգի ձևավորմանը, ուստի և այն ամրագրված է **ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉՈՒՄ՝**

- ✓ Չափորոշչով սահմանվում են հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝
  1) գիտելիք
  2) հմտություն
  3) դիրքորոշում
  4) արժեքային բաղադրիչ /ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ/

/ Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությանը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:/

Ըստ իս՝ արժեքը հարաբերական հասկացություն է, այլապես այն տարբեր չէր լինի անգամ նույն ընտանիքում մեծացած երեխաների, նույն կենսամակարդակում գտնվող կամ նույն կրթությունը ստացած մարդկանց մոտ: Դա ոչ թե երևույթի , այլ երևույթը ընկալողի չափիչն է: Այն երևույթներին նայողի կամ դրանք ընկալողի դիտակետն է, որը ձևավորվում է կյանքի տարբեր իրավիճակներում և ավելի շատ կախված է ոչ թե երևույթից , այլ այն գնահատող անհատից:

Ուստի անհրաժեշտ է հասկանալ՝ **ինչ է արժեհամակարգը, և ինչ կարևորագույն դեր է բաժին ընկած ինձ՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչի, և ինչ արժեհամակարգ է պետք ձևավորել այս առարկաների ուսուցման ընթացքում:**

Ինչ է արժեքը

Արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:

Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են **հավատն ու սերը**:

Հավատը ծնում է հույս և մղում՝ ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ՝ մարդու կյանքի և գործունեության համար: **Մարդիկ, քանի դեռ ապրում են, հավատում են, քանի դեռ հավատում են, ապրում են:**

Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Այն բաղկացած է մի քանի մակարդակներից: Այլասիրությունը ուրիշին սիրելու, իսկ ինքնասասիրությունը սեփական անձը սիրելու երևույթն է: Այլ բան է եսասիրությունը:

Նաև կան սիրո առանձնացված դրսևորումներ: Օրինակ սերը անհավասարների միջև, երբ միայն տալիս ես՝ առանց վերադարձի ակնկալիքի: Սիրո այդ ձևն անվանում են մայրական:

Հաջորդը սերն է հավասարների միջև, երբ ինչքան տալիս, նույնքան ստանում ես:

Օրինակ՝ եղբայրական սերը:

Սերն անհատական ընտրողական զգացում է, որը դրսևորվում է խորը և կայուն ապրումներում: Ըստ Հեգելի՝ սիրո ճշմարիտ էությունն այն է, որ հրաժարվես ինքդ քեզ գիտակցելուց, մոռանաս քեզ ուրիշի <<Ես>>-ի մեջ և այնուամենայնիվ , այդ կորսվածության ու մոռացվածության մեջ անգամ գտնես և տիրապետես քեզ:

Սերն ապրում է և ըստ Հեգելի՝ չի հենվում խորհրդածությունների և դատողականության վրա, այլ բխում է զգացմունքից: Սերը խիստ անհատական և անկրկնելի ապրում է:

Ամեն մեկը յուրովի է սիրում: Սիրո մեջ մարդն ավելի պահանջկոտ է դառնում ինքն իր նկատմամբ, ձգտում ինքնակատարելագործման: Ահա թե ինչու սերը մշակութային և գեղեցիկ երևույթ է:

Հաճախ արժեք է համարվում **ճշմարտությունը,** հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Բարու, գեղեցիկի, արդարի միասնության սկզբունքը գալիս է Սոկրատեսից, ով փիլիսոփայական գիտելիքը բաժանում է տեսականի (որի կրողը նա համարում է **ճշմարիտը**), գործնականի (**բարին**), գեղարվեստականի (**գեղեցիկը**):

Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ - մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն, իսկ գոյաբանական և իմացաբանական իմաստներով ըմբռնված ճշմարտությունը արժեքաբանորեն չեզոք է : Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին: Եթե Արիստոտելն առաջնորդվում էր **<<Թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է>>** սկզբունքով, ապա շատերն առաջնորդվում են **<< թեև ճշմարտությունը թանկ է, բայց Պլատոնը բարեկամս է>> սկզբունքով:**

Արժեքների տարբերակումը

Արժեքները բավարարում են սուբյեկտի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Սուբյեկտի արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնք ձևավորում են անձի ներաշխարհը: Իսկ ինչ վերաբերում է ազգային արժեքներին, դրանք բախտորոշ նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում, կազմում ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության ու անխափան զարգացման երաշխիքը: Ազգին հատուկ արժեքներն արտացոլվում են նրա ինքնագիտակցության տարբեր ձևերում՝ արվեստի, փիլիսոփայության, բարոյականության, կրոնական պատկերացումների , բանահյուսության մեջ: Ազգի արժեհամակարգը պետք է յուրացնի յուրաքանչյուր անհատ՝

հանրության մեջ բնականոն գործելու համար: Այսպիսով անհրաժեշտ է տարբերակել **արժեք-միջոց** և **արժեք-նպատակ** հասկացողությունները:

Օրինակ՝ « իշխանությունը » մի բան է որպես միջոց, մեկ այլ բան՝ որպես նպատակ, նմանապես փողը և փառքը: Երբ իշխանությունը, փողն ու փառքը դառնում են անձի գերագույն արժեք, դա հիվանդագին և ախտածին երևույթ է, մինչդեռ որպես միջոց՝ դրանք համարվում են կյանքի ընդունելի ու անհրաժեշտ տարրեր:

Առանձնացնենք նաև **արժեք-արժանիքները**, որոնք անձի համար ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիք են, այլ նաև ցանկալի հատկություն: Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է

« անհատ-ազգ » փոխհարաբերությունների կարգավորման առումով:

Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները, մասնավորապես

« հաստատակամություն », « աշխատասիրություն », « համբերատարություն » և այլն: Պետք է տարբերակել ազգային արժանիքներ հասկացությունը, որում առանձնանում է ազգային-պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքներ՝ **արժանապատվություն, արդարամտություն, աշխատասիրություն:**

<u>Արժանապատվությունը</u> սեփական «Ես» -ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է, անձի ինքնագնահատականը:

<u>Ազգային արժանապատվությունը</u> սեփական ազգի արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ:

<u>Արդարամտությունը</u> այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա:

<u>Աշխատասիրությունը</u> աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է: Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է: Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է որևէ էական խնդրի առաջացման:

Այսպիսով պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես **մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է:** Այն անհատներն ու ազգերը, ոոնք ապրում են արժեքների գերակայությամբ, բարձր, ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները, վրա է հասնում ոգու սովը:

Ոգեղենությունը պեք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝ մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը:

Նորմերը, որոնք ձևավորվել են հասարակության մեջ, հանդիսանում են արժեհամակարգերի բարձրագույն դրսևորումները (այսինքն՝ իշխող տեսակետներն այն մասին, թե որը համարել լավ, ճիշտ կամ ցանկալի): **<u>Արժեք և նորմ</u>** հասկացությունները տարբերվում են: Արժեքները վերացական, ընդհանուր հասկացություններ են, իսկ նորմերը որոշակի իրավիճակներում մարդկանց վարվելակերպի կանոներն են կամ առաջնորդող սկզբունքները: Արժեհամակարգերը, ձևավորվելով հասարակության մեջ, մեծ դեր են խաղում, քանի որ ազդում են նորմերի վրա:

Արժեքներ կարող են համարվել

- ✓ **Առողջությունը**
- ✓ **Սերը, ընտանիքը, երեխաները, տունը**
- ✓ **Մտերիմները, ընկերները, շփումը**
- ✓ **Ինքակառավարումը աշխատանքի մեջ: Աշխատանքից հաճույք ստանալը**
- ✓ **Նյութական բարեկեցությունը**
- ✓ **Հոգևոր արժեքները, հոգևոր աճը, կրոնը**
- ✓ **Ժամանցը՝ հաճույք, հոբբի, զվարճանք**
- ✓ **Ստեղծագործական ինքնադրսևորումները**
- ✓ **Ինքնակրթությունը**
- ✓ **Սոցիալական կարգավիճակը և դիրքը հասարակության մեջ**
- ✓ **Ազատությունը (խոսքի, ընտրության և այլն)**
- ✓ **Կայունությունը**

Կարող են լինել նաև այլ արժեքներ: Տարբեր մարդկանց մոտ արժեքների գերակայությունը տարբեր է:

Ինչպես նշում է հետազոտող Պալինա Գաջիկուրբանովան, ստոիցիզմը հակադրվում է իմաստուն տգետների հետ. «Անգետը իրերին մեծ արժեք է տալիս, քան իրականում ունեն բնության մեջ, և սխալ պատկերացումներ է կազմում բարու և չարի մասին: Արդյունքում նա ձգտում է հասնել նրան, ինչն իրեն բարիք է թվում՝ առողջության, փառքի, հարստության, սակայն իր ձգտումների մեջ նա անցնում է բնության կողմից գծված որոշակի սահմանը, այսինքն՝ ընկնում է իր կրքերի և պատկերացումների պատճառով ստեղծված թակարդը» :

Անհատի արժեքային համակարգը, նրա անձնային որակները ձևավորվում են նախևառաջ ընտանիքում: Բայց և հասարակության որակի ամենամեծ պատասպանատուն ՄՆՈՒՄ Է կրթական համակարգը, որին տրված է ոչ միայն կրթելու, այլև դաստիարակելու բարդ և պատասխանատու գործը:

Կրթական համակարգի ամենախոցելի , բայց և ամենապատասխանատու օղակը դպրոցն է:

Այսօր ամենատարբեր մեղադրանքները կարող ենք լսել դպրոցի, այնտեղ տիրող «բարքերի», գրագետ կամ անգրագետ կրթողների և այլնի մասին: Իսկ ըստ էության բոլոր ժամանակներում դպրոցը եղել է և կա հասարակության և անհատի ձևավորման կարևորագույն դարբնոցը:

Դպրոցը պետք է լինի այն բացառիկ օրինակելի տարածքը, միջավայրը, որտեղ հաստատուն են էթիկական նորմեր, և որտեղ աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող և չպետք է հեշտ լինել երեխայի համար. նա պետք է զգա և՛ ուրախություն, և՛ հիասթափություն, ունենա և՛ ձախողում, և՛ հաջողություն, և՛ դժվարություն , և՛ հաղթանակ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք, հասկանա՝ ինչ է բարեվարքությունը և պահպանի այդ կանոնները : Այդ ամենի պտուղները կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք ստեղծել, կերտել այնպիսի դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը, ամենալավ և օրինակելի քաղաքացին, ամենաբարեկիրթ ու զարգացած ՄԱՐԴԸ:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը

մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես անգնահատելի է հայոց լեզվի և գրականության դերը:

ՀՀ-ի պետական լեզուն **հայերենն** է: Սա արդեն իսկ ապացույցն է այն բանի, որ մեր ազգային և պետականամետ մտածողության հենքը հայոց լեզուն է :

Այս բանաձևումը եկել է դեռևս Մաշտոցից, հոկվել Աբովյանով ու Բայրոնի չափորոշչով դարձել Աստծո հետ խոսելու՝ աղոթքի լեզու :

Հայաստանում կրթությունը իրականացվում է հայերենով և բնականաբար հայոց լեզվի իմացության մակարդակն էլ կարող է որոշել կամ նպաստել այլ առարկաների իմացության չափին կամ նյութը հայերենով ընկալելու արդյունավետությանը: Ուստի անկախ ամեն ինչից, հայերենի իմացությունը պարտադիր է բոլորի համար և ամենևին արդարացուցիչ հանգամանք չէ որևէ այլ առարկայի ժամին ոչ հայեցի խոսքը կամ սխալների անտեսումը ուսուցիչների կողմից:

Անհատի կամ հայի արժեհամակարգի ձևավորումը մայրենիի կամ հայոց լեզվի և գրականության դասերին սկսվում է դպրոց կատարած առաջին իսկ քայլից / չենք խոսում նախակրթարաններում ստացած կրթության և դաստիարակության մասին /: Նախագրային , այնուհետև գրային շրջանում սովորողն արդեն գաղափար ունի լեզվի կարևորության, Մաշտոցի սրբազույն գործի և տառերի՝ զինվոր լինելու մասին: Տառերի մի մասը դեռևս չանցած՝ սովորողը կարդում է, իսկ ուսուցիչն առավել հանգամանալից ներկայացնում է « Հայկ և Բել » առասպելը՝ մատնանշելով հայ ժողովրդի անկոտրում կամքը, հաղթողի հոգեբանությունը, երբեք չծնկելու, թշնամուն չենթարկվելու կարևորագույն հատկանիշը: Սա արժեհամակարգի ձևավորման առանցքային կետերից է՝ հայրենասիրություն, արմատների ճանաչում, կամք և զորություն:

Տարբեր տարիների ուսումնական ծրագրերում մայրենիից նախատեսված է ժողովրդական բանահյուսության տարբեր տարրերի ճանաչում՝ առած-ասացվածք, հեքիաթ, առակ, առասպել, գաղափար էպոսի մասին և այլն: Դասագրքերում ընդգրկված նյութերը հայրենի բնության , նրա հանդեպ սիրո, բնության պահպանության, բարիք գործելու, լավ և վատ արարքների, ընկերասիրության մասին են և , բնականաբար, կարևոր որակներ են անձի ձևավորման համար:

Բայց ահա սկսած 7-րդ դասարանից, երբ ավելի ընդլայնվում է սովորողի մտածողությունը և արդեն որոշակիորեն ձևավորված է նրա աշխարհայացքը, հայոց լեզվի, առավել ևս գրականության առջև դրված խնդիրները շատ ավելի են լրջանում և այս առարկան իսկապես կարևոր է սովորողի արժեհամակարգի ձևավորման համար :

Եթե հայոց պատմության դասաժամին սովորողն ուսումնասիրում է ժողովրդի ծագումնաբանությունը, հայրենի երկրի անցած ուղին, դիրքը աշխարհի քարտեզի վրա, դա դիտարկում է որպես անքննելի ճշմարտություն, ապա գրականությունը կյանքի կամ պատմության գեղարվեստական դրսևորումն է՝ այլ գույներով և ելևէջներով , երբեմն նաև հակասական , վիճելի…Նար-Դոսը, ով ռեալիստական գրական ուղղության ներկայացուցիչն է, հենց այդպես է բնութագրում գրականությունը. « Գրականությունը հայելի է, որը ոչ միայն ցույց է տալիս ճակատիդ քսված մուրը, այլ նաև ցույց է տալիս այն մաքրելու ճանապարհը » :

Հայոց լեզվի և գրականության դասաժամերին արժեքային համակարգի ձևավորման մասին խոսելիս անհնար է առանձնացնել որևէ տարր, որևէ բաղադրիչ, քանզի այս առարկաների դասավանդման ժամանակ յուրաքանչյուր քայլ, յուրաքանչյուր խնդիր, նպատակ միտված է բացառապես դրան:

Արժեհամակարգի բուրգի գագաթը հայրենասիրությունն է, հայրենասիրության հիմնասյունը՝ լեզուն: Ահա և արժեհամակարգի ձևավորման բանաձևը հայոց լեզվի և գրականության դասաժամին:

Եթե դիտակելու լինենք միայն 7-րդ դասարանի գրականության ուսուցման առջև դրված պահանջները, խնդիրներն ու նպատակները, այն բավական կլինի ամբողջապես ներկայացնելու արժեհամակարգի ձևավորման մեջ այս առարկայի կարևորությունը: Սովորողը գրականության լայն ասպարեզում ճանաչողական առաջին քայլերը սկսում է Ե.Չարենցի հետ, նրա կերտած արվեստի հետքերով: Հայրենասիրության մեծագույն արժեք է և ինքնատիպ խոսքարվեստի նմուշ, գրականության մեջ բառերով կերտված ամենաինքնատիպ կտավ է «Ես իմ անուշ Հայաստանի…»-ն…Ահա այս ստեղծագործությունը հենց առաջին հերթին սիրո, նվիրումի, հայրենի բնօրրանի գունաշխարհի ընկման, մշակույթի, լեզվի, գրականության մեջ Չարենցին նախորդած

մեծությունների, սայաթնովայական ոճավորման, նշանակում է նաև այդ արվեստի ընկալման կարևորագույն խտանյութն է:

Դ.Դեմիրճյանի թողած գրական ժառանգությունը, հատկապես «Ավելորդը» պատմվածքը ձևավորում է կարևորագույն հատկանիշներ՝ մարդասիրություն, հոգատարություն, երախտագիտություն, և խորհել է տալիս նյութական ու բարոյական արժեքների, դրանց՝ կյանքում ունեցած դերի և նշանակության մասին: Եվ պատահական չէ, որ ստեղծագործական աշխատանքներ կատարելիս , երբ հանձնարարվում է փոխել գործողությունների ընթացքը կամ նամակ գրել Հաճի աղային կամ այլ վերջաբան մշակել ստեղծագործության համար, դրսևորվում են երեխաների ամենաբացառիկ և ինքնատիպ լուծումները:

Յուրաքանչյուր երեխա առաջին հերթին իր ընտանիքի արժեհամակարգի կրողն է:

Եվ հաճախ, աշխատելով սովորողի անձնային աճի և արժեհամակարգի վրա , հաջողվում է վերափոխել նաև մտածողությունը ընտանիքում:

7-րդ դասարանում սովորող աշակերտի համար, գուցե նաև մի փոքր դժվարընկալելի, բայց հետո խորապես մնայուն արժեք է Ա.Բակունցի «Սպիտակ ձին » պատմվածքը: Այս պատմվածքում նույնպես բազմաշերտ և բազմատեսակ արժեքների կարևորումը առանցքային է: Այստեղ ուսուցչի կարևորագույն խնդիրը մարդ-բնություն, մարդ-մարդ, քաղաքացի-պետություն փոխհարաբերությունների, ինչպես նաև մարդու ներքին պայքարի, հույզերի բախումների , ինքն իր դեմ պայքարի , արդարության և ստի բախումի և մի շարք այլ նուրբ հոգեբանական խնդիրների վերհանումն է, որոնք նույնպես անհատի և նաև քաղաքացու ձևավորման կարևորագույն հիմքն են: Իսկ զուգադրումը , նմանությունների համադրումը Հ.Թումանյանի « Գիքորը » պատմվածքի հետ, ավելի է խորացնում մարդու և կենդանու՝ որպես հարազատ հոգիների ընկալումը, սոցիալական անհավասարության և դրա արդյունքում կործանվող ճակատագրերի թեման, մարդկային « անմարդկայնության » չափը:

Այս և գրեթե բոլոր ստեղծագործությունների գաղափարական գլխավոր շեշտադրումը մեկն է՝ **ՄԱՐԴԸ ՄԵԾԱԳՈՒՅՆ և ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԺԵՔ Է:**

Սա ձևավորվող արժեհամակարգի բարձրագույն գագաթներից մեկն է:

Այսպես կարելի է անվերջ օրինակներ բերել , քանզի գրականության նպատակն ինքնին սովորողների մոտ արժեհամակարգի, ազգային մտածողության ձևավորումն է:

Գրական յուրաքանչյուր ստեղծագործության գեղարվեստական արժեքը սիրո, հայրենասիրության, որդիական երախտագիտության, մայրական սիրո, ընտանեկան ջերմության և հավատարմության, բնության և կենդանական աշխարհի հանդեպ սիրո և հոգատար վերաբերմունքի, ինքնասիրության , պատվախնդրության, աշխատասիրության և մի շարք այլ կարևորագույն հատկանիշների սերմանում է, կերտված կերպարների օրինակով դրանք կյանքի կոչելու և դրանց միջոցով բացասական և պախարակելի հատկանիշների՝ ատելության, դավաճանության, ծուլության, ագահության մերժումը:

Այսպիսով, յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ» : Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի յուրաքանչյուր ուսոցչի ուշադրության կենտրոնում:
Իսկ մայրենիի, հայոց լեզվի և գրականության ուսուցչի առջև դրված խնդիրներն ամենաէականն են ու կարևորագույնը, նրա դերը՝ անհամեմատելի մեծ ու նշանակալից:
Եվ ցանկացած սովորողի արժեհամակարգը ձևավորող գլխավոր ճարտարապետը ուսուցիչն է, կարևորագույն ուխտը՝ սերը մարդու, հայրենիքի, մայրենի լեզվի հանդեպ: